

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիտ	հաւար
Տարեկան	12 Թր.
Վեցամսեայ	6 "
Արժանատի	
հաւար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Սակերիկայի	հաւար
Տարեկան	3 սր.
Վեցամսեայ	1.50 "

Ծանուցանել տողը առաջին երեսին հաւար 40 սրսկ վերին երեսին հաւար 20 սրսկ իւր հրեական անգլիկաներու հաւար 20 0/0 զեղչ կըրէ:

Վաճառայի հաւար մ'ոքե 10 սրսկ

# ՇՈՒԱԹ

R. P. Kalémcarian, Mechitharistengasse  
(Autriche) W. 4. journal  
Vienne (gazette)

Նախակ և ցրակ դրին հիւրագրութեան հասցին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Արժանատի հաւար  
մեքէ  
( 20 ՍՈՆԹԻՄ )  
Պուշկարիտ հաւար  
մեքէ  
( 15 ՍՈՆԹԻՄ )

Գրութիւնք և յեւ սրտիք

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՍԱԿ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ԶՐ. ՏՐԱՐԱՌԻԻ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇՈՒԱԹ ՕՐԵՐԸ

ՇՈՒԱԹՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԵԿԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

### ՖԻԼԻՊԵՒ ՌԻՍՈՒՑԻՉ—ՊԱՏՈՒԵԼԻՆ

Ձի մտնաք որ պատուելիին լուսն է հիմա:

Յեղափոխական (՞) պատուելի ունիք—Ձի թճեանք. ուսուցիչ պատուելի ունիք—Ստորմտեանք:

Եթէ առաջինը Սերոբնեւոյ հայտնի է, միւր թիւը պատակալի է ետքը նորէն յեղափոխական տնտեսը բերանը առնելու յոբանային կ'ընէ և վաճառքը մտրեցնելու համար ճամբայ ելել է, վերջինն ալ յողջաբակն փրփականային համար մատակ մտքերը խամբեցնելու, վաճառելու դործը ձեռք առած է:

Ինչո՞ք Ձի թճեանին գլխակը անանկ վար առնել մը առնուեցաւ որ, ուրկէ գալը չի գիտցաւ. ասոր համար չեմ ուզեր խօսել անոր մասին:

Իմ խօսքս ուսուցիչ պատուելիին համար է այս անգամ:

Ծանրանալ հարկ է ստիպան պատուելիներուն վարժարաններուն վրայ, որոնց մէջ բոցի մանկավարժութիւն է և առողջ ու ազգային կրթութիւն է, ամէն բան կ'այ, չի հաշուելով օրական քան մը անգամ Սուրբ դրբի դասերը. որոնք առաջին տեղը բռնած են հոն... Ստ խամբոյցերէն ներս, շատ անգամ, չի նայած որ որքան տղայ, սննդան դաստիարակայ, պատուելիին ինքն է մինակ ուսուցչը ամէն առարկայի համար: Անոր հրաշագործ ձեռքը (՞), անոր համար նախաճաշ (՞) միտքը ամէնքուն ալ հասնելու արհեստը գիտէ:

Երբք ասորի եղաւ կայ ծեմ որ անտանկ վարժարան մըն ալ հոն հաստատած է Նարաբնեան պատուելիին:

Գծադրարար ոչ իր պատուելիական ձեւերն ու ուսուցիչի և անամէլ խօսքերը ոչ իր կէտսերիչն ու կէս մէթրոնոց սիւրնալը, ոչ հրօսարակին վրայ վայ ձած փառս որ տներն ու կէս օր կէս դիշեր, առտու իրիկուն, տեղը ըլլայ չըլլայ հնչեցուցած դաշնակի քաղցրութիւնը, և ոչ իսկ անհնկուն կամք (՞) և հաստատ նկարագիր (՞) ին պատարաստելու համար բրած հրապարակային յայտարարութիւնները չի կրցան ու չի կրցան պատուելիին իւր մոտեցնել ներս քառական թուով աշակերտ քոչի: Աշակերտներուն թիւը 15-20 է չանցաւ ու չանցաւ, անոնց ալ արդէն կէսն աւելին բողբոջական:

Բայց փառքերին ան է որ ատ սակաւաթիւ ծնողքներն ալ արթնանա

և չի քաջալերին ատ մարդորական խամբոցները, որիկելով հոն իրենց տղաքը: Եւ եթէ յոգնութիւնը յանձն առնել կարժէ աս մասին գրելու, ան ալ աւելի Թիւրքիէն դուրս գանուող ազգայիններուն համար է, որովհետեւ աս ասորի զրոյն մէկ-երկու արգաքներ աս ծուղակը ինկեր են:

Աս շրջանին մէջ առնել մը ի վեր ուշադրութիւնս գրաւած է ին երկու տղաքներ—12 և 15 տարեկան գրեթէ—որոնք ախալով սուրբ վրբք ձեռքերին ամէն կիրակի պատուելիին հետ ժողովարան կ'ընէին ու կ'ուզան դասնուկի պէս: Հետաքրքրուեցայ չիտակը ատ տղոցով և ինձի պատասխանեցին որ մէկը կ'ընէին Է և իսկ միւսը բերուած է, իսկ միւսը մտացալ ուրկէ ըլլալը:

Շատ գէշ ազգաց վրաս ատ տեղեկութիւնը: Իսկ միւսին հոս տղայ գրկել պատուելիին վարժարանը գրկելու համար... Այդեօք ատ տղոց ծընողքը անկեղծ բարեկամներ չունէին որ աս սխալը փնայնէին անոնց, վառնալն մինչև Թիւրքիէ մեր ո՞ր վարժարանը ատ անգամ իր ձեռքէն չի հաներ պատուելիին դպրոցը: Ի՞նչ առաւելութիւն գրգռեց զիւրեք այդ քայլը անհիւր:

— Հա՛, հա՛, ներիցեք, բացի անգլիկներէն, ինչ որ չուրացուիր, պատուելիին շնորհով ալ հայկաբան է ու հայերէն կը սորվեցնէ. ան իր յատուկ քերականութիւնը ունի. որ ամենէն լաւ հայկաբանին բերին ջուրերը կը վազցնէ:

Ձեմ ուզեր ընթերցողը գրկել ատ եղական հայերէնէն: Ահա՛ նմոյշ մը: «Յառաջիկայ երեքշաբթի՛ երկկոյնեան ժամը 7 (ճ/չգ ա ճեղ) կրթարանին ուսանողք ուրախութեան ելեկոյ մը պիտ' ունենան, դպրոցիս սրահը, Սրբ. Մննդեան տօնին առթիւ, երբ լուսազարդ ծառի մը շուրջ պիտի հաւաքուին ծնողք և բարեկամներ. սոյն հանդէսն յարմար տրամախօսութեան մը գտա՛ պիտ' ունենանայ հաստատութեան վարժուհիին՝ Օր. Պրէօյիլիսի հսկողութեան տակ, դաշնակի վրայ և երգեհոնի հետ երգուելիք երգեր, որով համարումը աւելի հրապուրելի պիտ' ըլլայ»:

Աղո՛րք հայերէն, անանկ չէ՞: Արդեօք պատուելիին հրատարակութեան տարէ առաջ քանի՛ անգամ սրբագրեց և որքան՛ հիացաւ իր գրածին վրայ, կատակը մէկ կողմ սակայն, ասանկ անձոնի հայերէնով «երկուողեր» աս մէկ չէ, երկուք չէ, ամեն անգամ կը ցո՛ցաղէ մեր պատուելիին:

Աս սքանչելի հայերէնը հետաքրքրեց զիս և հարկադրեց երթալ հանդէսին, նոր բան մը անսնելու համար. Եւ հետաքրքիր բաներ պակաս չէին հոն:

Հանդէսը բացաւ պատուելիին ներկաներուն ուղղած շատ կոշտ դիտողութիւնով մը: Պատուելի Նարաբնեան պատուելից որ հասարակութեանն ոչ մէկը իր տեղէն չի շարժի, անկարգութիւն չընէ, բան մը որ եւրոպայի մէջ անկրթութիւն, կոշտութիւն կը սեպուի. հակառակ պարագային ինք պիտի ստիպուի հանդէսը ընդհատել և անզերնիք նստեցնէ՞ք ըսել:

Աս նեղ սրտին համար մանաւանդ, առաջին ստիպու ատ կոշտ բացատրութիւնը մեր պատուելիին հայրը ըլլալը չէր կ'ընէ շնորհով:

Եւ իմա մեր պատուելիին հանդէսէն ետքը ըրած խօսքերը մտիկ ըրէք ու մի գղութիւն:— Հասարակութեան շատ լաւ կարգապահութեան համար շնորհակալութիւն յայտնեց և ըսաւ որ բարեկամ մը իրեն դրգր է որ առաջուան դիտողութիւնը ընէ. չէ նէ ինք գիտէ կ'ընէ որ հայերը կարգապահ են, մանաւանդ այսինչ միսիօնարը իրեն ժամանակին ըսեր է եղեր թէ շատ տեղեր պատած է բայց հանդէսներու մէջ հայերուն պէս կարգապահ ժողովուրդ՝ Ամերիկայի քաղաքներուն մէջ անգամ չէ տեսած:

Է՛ աս Աստուծոյ մարդը եթէ ատ գիտէր ինչո՞ւ անչի կոշտ խօսքը ըրաւ: Թիւրքիէ մէջ հանդէսներ նոր չէ որ կ'ըլլան, թող օր մը հրամայէր պար և ինք ալ համոզուեր որ կարգապահ ենք ոչ թէ առանկ նիւար բազմութեան մը ատեն ալ եթէ հարիւրներ ըլլանք Շիտակը խօսելու համար ըսեմ որ պատուելիին իր այս կոշտ ու ծիծաղելի ընթացքով որոշ տուաւ որ իր կարգապահութեան հրօսիքած հասարակութեան շատ բան ունի սորվելու:

Հանդէսը գուտ կրօնական էր իբր թէ: Ի՞նչ ալ պղտ էր հայերէնը, բայց ինք վերէն վար, ուստի չեմ ուզեր բան մը ըսել մանաւանդ տեղի ունեցածները աղայական բաներ էին: Կարծէ խոստովանել որ հոն տեսայ երկու-երեք ընդունակ օրիորդներ և տղաքներ, որոնք սկսած են դժբաղդարաբ վարակելի պատուելիական ձեւերով ու շեշտերով: Ատ տղոցը տեղի պատուելիին խամբոցը չէր շեշտակը...:

Մէկ-երկու դիտողութիւն ալ եթէ չի ցաւիր մեր պատուելիին...:

Հանդէսին մէջ մէկ շատ ազգային երգ չերգուեցաւ, հայ պատմութեան

մասին բան չըսուեցաւ ինչ որ պատուելիին տուած կրթութիւնը կրնայ բնորոշիլ, Եթէ հանդէսը գուտ կրօնական էր, ի՞նչ բան ունէր հոն սիրազոր կըր՞ կամ մերազոր կը, որոնք երգուեցան. ի՞նչ տեղի կար ցուցադրել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիկերէն տեղի հայ մը երգեր: Եթէ հանդիսականները շրջանուտ համար էր, կը բաւէր միայն պատուելիին ձեւերն ու պոռոտախօսութիւնները:

Եւ յիտոյ, պատուելիին յայտնած մէկ միտքն ալ կարժէ հոս գնել. — պիտի կոտորուի՞ ըսաւ պատուելիին— Մակեդոնացին, պիտի կոտորուի հայրը, որովհետեւ մենք հեռացած ենք Յիսուսէն, որովհետեւ եւրոպացին հեռացած է Յիսուսէն:

Պատուելիին մտացաւ ըսելու որ արդեօք թուրքերը և քրդերը մտեցած են Յիսուսին որ անոնց խրլըճը այդքան քէսքին է:

Վերջապէս ի՞նչ մեղքս պահեմ, ես որ փասթէօր մը ունկնդրելու հպարտութիւնը զգալով հոն գնացի, ամէնցայ և կարծեցի թէ մեր ամենէն սըղէտ տերտերին անցեւ կը գտնուիմ:

Այսպէս թէ այնպէս աս հանդէսն ալ առիթ տուաւ որ պատուելիին ալ իր տուած կրթութիւնը աւելի լաւ ճանչնամ ու ճանչցնեմ:

Ուրիշ անգամ Աստուծով նորէն առիթ կ'ունենամ անանկու:

Ա.ԳՐՕ

Թիւրքիէ 10 յունուար

Հ. Ա. Ն. Գ. Ա. Ն. Ա. Կ. Ռ. Ի. Թ. Ի. Ի. Ն.

Երկու շաբաթէ ի վեր թեւթիս խմբագիրը՝ Վարդօ հանգանակութեան սկսած է Վարնայի մէջ. ի նպաստ հայ. յեղ. Դաշնակցութեան:

Հանգանակութեան գումարը հասած է հազար ֆրանքի և դեռ կը շարունակուի:

Վառնայի հայ հասարակութեան ունեւոր մասը գրեթէ առանց բացառութեան և սիրայօժար կերպով մասնակցեցաւ և դեռ կը շարունակէ մասնակցիլ հանգանակութեան առանց ունէ տրտուանի:

Ամէն կողմէ լուրեր կուգան որ հայ արհեստաւոր դասակարգն ալ կուզէ իր լուսն ձգել յեղափոխութեան գանձանակին մէջ:

Այս դրական իրողութիւնը կուգայ փաստել որ Դաշնակցութեան և Վարդօի մասին եղած հաջոցները ոչ մէկ ազդեցութիւն թողած են նաեւ Վարնայի հայութեան մէջ:

ԲՈՏՈՆՆԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ ԿՅՆՆԵՐԻ  
Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ԲԱՐՆԻ  
ԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Անձայն ու անչուկ նուիրուած  
բոլորովին իրենց յանձնուած պաշ-  
տօններուն, որք որ կանոնադրու-  
թեան ու յառաջացման շաղին մէջ  
կը դնեն քաղաքի ազգային գոր-  
ծերը՝ ահա իսկ երկու պաշտօնական  
մարմինները ալ, թաղ. խորհուրդն  
ու Բարեգ. րնկ. պատ. վարչութիւնը:  
Իրենց աշխատութեան կանոնադ-  
րութիւնն ու յարատեւութիւնն է,  
որ, խորապէս համոզուած ժամանա-  
կի ընթացքէն, մեզ պարտք կը դնէ  
անկողմնակալ օրէն պատկերել այս  
սուղ էջերուն մէջ իր քաջաբերու-  
թիւն իրենց գնահատելի պաշտօնա-  
վարութեան:

Տասն ամիսներէ ի վեր ընտրուած  
է պատ. Թաղ. խորհուրդի մարմինը,  
որուն հոգածութեան ու խնամոց  
յանձնուած են եկեղեցին ու քաղա-  
քիս Հայկազան երկսեւ վարժարա-  
նը: Հիմնուած ազգ. սանձանագրու-  
թեան արամագրութիւններուն եւ  
օժտուած զօրանոր կամքով ու առողջ  
տրամաբանութիւնով՝ սոյն պատ.  
մարմինը իր բոլոր ճիշդ կը թափէ  
ներկայ սերունդին դաստիարակու-  
թեան ու ազգային ոգւոյն պահպա-  
նութեանը համար: Չենք ըսեր թէ  
նախորդ պատ. մարմինները նոյն  
ջանքը զլացան, բայց օրէ օր յա-  
ջաջուամբարդէն պէտք էր որ ծնէր  
ներկային պէս հեղինակաւոր մարմին  
մը:

Քաղաքիս Հայկազան վարժարա-  
նը՝ անցեալ տարւոյ մարտին «կսեալ»  
երբ օրինաւորապէս կրթական նա-  
խարարութեան կանոնադրութեան  
կրթարան ճանչցուեցաւ, իր տարե-  
կան եկեւմտացոյցին վրայ մօտաո-  
րապէս 2000 ֆր. յաւելում մը ունե-  
ցաւ: Կրթական սոյն փոփոխութիւն  
իր յարաբերական կարգ մը ծախսե-  
րով կը զօւարտուէր եկեղեցական եւ-  
քին վրայ, ու ազգ. եկեւմտացոյցը կը  
բարձրանար տարեկան 10-12 հազար  
ֆրանքի: Մեր Բուժանաւայ կղզոյ-  
ները նկատի թող ունենան որ, Գոս-  
թանցայի ազգ. հաստատութիւնները  
օժտուած չեն — զժբախտաբար—  
ու մէկ հաստատուէն եկամուտով, ու  
տեղւոյն հայ հասարակութիւնը միլ-  
եօնատէրներ չեն ուրիշ Բուժանաւայ  
կեդրոններու նման: Տարեկան 12  
հազար ֆրանքը մոզովքեան զանա-  
զան կերպերով նուիրատուութեամբ  
կը հանգանակուի՝ պատ. Թաղ. խոր-  
հուրդի աշխատութեամբ:

Իրամական այս հայթայթումէն ա-  
ւելի խորհուրդը իր աշխատանքի ա-  
ռարկան ըրած է վարժարանիս 110  
երկսեւ աշակերտաց ազգային մտա-  
ւորական ու բարոյական դաստիա-  
րակութիւնը, որուն կը հետեւի ա-  
մէն օր իր վարժարան այցելութեամբ  
բժշակութեան իր զիտակեց ուսուց  
չական մարմնով մը, որ ոգի ի բռնին  
կաշխատի նոյնպէս ազգային ջանքերը  
պատկերու համար:

Ոչ նուազ գնահատելի են նաև  
պատ. խորհուրդին հոգածութիւնը  
հանդէպ սուրբ եկեղեցւոյ պայճա-  
նութեան: Բոնիթանցայի ազգային-  
ները ուրախութեամբ գնահատելին  
նաև Ս. եկեղեցւոյ առընթեր շին-  
ուած բանկան ու խորհրդարանը:

որ ոչ միայն իրր գեղեցիկութիւնն ու  
անհրաժեշտ պէտք նկատուած չլին-  
քեր կուզան պակաս լրացնել եկե-  
ղեցւոյն, այլ նաև պատճառ եղան  
առաջին անհրաժեշտ վտանգին, որ  
տեղի պիտի ունենար անվերջ ամ-  
բողջ դանդաղատան փլուզումովը՝ քա-  
նի որ կազմուածքին ամբողջ առաջ  
ները փաստ էին՝ Ակամա պարտա-  
ւորուեցանք մանրամասնել հոս, պա-  
տասխանած ըլլալու համար այն կարգ  
մը անձերուն, որոնք աւելորդ ծախս  
ընէ սիրեցին:

Ու պատ. խորհուրդը իր այս աշ-  
խատանքէն յուրս, ժամանակէ մը  
ի վեր սկսած է պատրաստել մայրա-  
համարի տուժարը՝ քաղաքիս եւ շրջ-  
ջակայ բոլոր ազգայնոց մանրամասն  
արձանագրութիւնները ընելով հոն:  
Ու այն աշխատանքը, զոր կը նը-  
ուերէ հանդէպ քաղաքիս պահուստ  
զուակարգելի դէպի հայրենիք երթե-  
ւեկութեան նկատմամբ, հանդէպ ի-  
րեն զիմող կարող ազգայնոց  
հանդէպ այն — վէճերուն, ու-  
րոնք տեղի կուրենան քաղաքիս մե-  
քաղնէից մէջ, ստեղծած են պատ.  
խորհուրդի շուրջը հասակակիան հո-  
սանք մը, որուն արդարապէս ար-  
ժանի ըլլալու իրաւունքը ունի:

Կալսելի պատ. հողարարութեան  
անդամները, սրոնք իրենց ելած ջն-  
ջին զիմուելի մի առթիւ՝ իրենց զըժ-  
կամակութիւնը յայտնած էին ա-  
միսներ առաջ — ամենաստոյգ աղբիւ-  
րներէ խնայած ենք — թող բարեկամե-  
ցողութիւնը ունենան յետ այսու հե-  
տաքրքրուելու եւ հետեւելու ազգա-  
յին օր եւ է լնդրանքի նկատմամբ,  
առանց ուրիշ աղբիւրի դիմելու: Այս  
առաջարկութիւնը կը նենք, անհա-  
տապէս քաջ ճանչնալով անոնց իւ-  
րաքանչիւրին հոգւոյն աշխուժութի-  
ւնը ու ազգասիրութիւնը:

Թաղ. խորհուրդի ընկեր եւ օգնա-  
կան մարմին մըն է նաև քաղաքիս  
Բարեգործ. ընկերութեան պատ. վար-  
չութիւնը: Որքան ալ իր ուրոյն  
կանոնագրութիւնը ու անկախու-  
թիւնը, սակայն իր նպատակը աե-  
սակ մը լրացուցել մասը կը կազմէ  
քաղաքիս հայութեան յառաջացման  
զորին, Ընկերութեան կեդրոնն է  
Հայկազան վարժարանի Արաքս սը-  
րանը, զոր մասնաւոր պայմանագրու-  
թեամբ վարձու առած է Թաղ. խոր-  
հուրդէն: Վարչութեան պաշտօնա-  
վարութեան պայմանագրումը, որ մէկ  
տարի է միայն, իր զոյութեան սոյն  
երեք տարիներու ընթացքին մէջ,  
սրահի կարասեաց զրքերու եւ թեր-  
թերուն, ու ազգասաց 9-10 հազար  
ֆրանք ծախսած է:

Արաքս սրահը, որ կը ծառայէր  
ընկերութեան իր ընթացաբար, 2-3  
ամիսներէ ի վեր՝ կանոնադր-  
ութիւն մը հաստատութեամբ՝ թատրոնի  
վերածուած է, եւ ուր վէսէջօ զե-  
րասանական խումբը՝ երկար ժամա-  
նակէ ի վեր ներկայացուցներ կու-  
տայ՝ կանոնադր. յանդուրութեամբ:

Ինչ որ մեզի համար ուրախալի  
պարագայ մըն է, այն ալ այն ներ-  
գաշնակ ընթացքն է, որուն կը հե-  
տեւին Թաղ. խորհուրդը եւ վարչու-  
թիւնը: Աշխատանքի ու յարատեւու-  
թեան այս եղանակաւորումն է, որ  
սիրելի ըրած են Բարեգործ. ընկերու-  
թիւնը յաջա քաղաքիս ազգայնոց  
որոնք ու եւ է առթիւ նւթակէս ու  
բարոյապէս քաջաբերէ երկեք չեն  
զագարն:

Ամսոյս 12ին, լրացած ըլլալով

պատ. վարչութեան միամտայ պաշ-  
տօնավարութեան շրջանը՝ գումար-  
ուած ընդհ. ժողովոյն մասոյց իր հը-  
րաժարականը ու հաշիւները: Այս  
վերջի տարուան մէջ, Բարեգործ.  
ընկերութիւնը մուտք ունեցած էր  
5500 ֆր. գումար մը, որ զրական  
ապացոյցը կրնայ նկատուել պատ.  
վարչութեան տարեկան աշխատու-  
թեանց:

Նորընտիր վարչութեան համար՝  
ընտրելեաց ցանկ մը պարաստե-  
լու համար՝ հետեւեալ անձնաւորու-  
թիւններէն յանձնաժողով մը կազ-  
մուեցաւ. Տ. Տ. Ժանիկ Գանջաւ-  
եան, Կ. Պէնիկան, Գ. Գէորգեան,  
Լ. Նշանեան, Մ. Պետրոսեան:

Յառաջիկայ կիրակի տեղի պիտի  
ունենայ նոր վարչական մարմնոյն  
ընտրութիւնը՝ ընդհանուր ժողովի  
կողմանէ:

Պատ. Թաղ. խորհուրդի եւ Բարեգ.  
ընկերութեան գործունէութեանց  
սոյն ուրուագծերը նկարելով հոս,  
մեր զլխաւոր նպատակն է, կը կրկ-  
նենք, քաջալիկ զիւրեք իրենց  
սոյն յառաջացումի շաղին մէջ, ու  
յետոյ, ուրիշ յօդուածով մը, զիմա-  
զերծ ընել այն սողունները — որոնք  
ամէն ազգի ու ամէն քաղաքի մէջ  
զժբախտաբար կան — եւ որոնք եթէ  
ոչ վերջնոյն, գէթ առաջնոյն շուրջը  
կը սողան:

Ճաշմա Իշխան  
13 յունուար 1903  
Բոնիսրանցա

ՅԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Բ.

96ի Հնչակեան պառակտումէն  
յետոյ սկսուեցաւ յեղափոխու-  
թեան վրայ արշաւանք, ինք  
զինք «Հնչ. ազգ. յեղ. կուսակ-  
ցութիւն» յորշորջող «խմբակէ»  
մը, որուն լիազօր ղեկավար, և  
խմբազիրը — հիմակ արտաքու-  
ւած — Իրփիար Արփիարեան կոչ-  
ուած ծանօթն էր:

Աւելորդ չը պիտի ըլլար եր-  
կարօրէն ծանոթանալ վերոյշեալ  
անձնաւորութեան վրայ, եթէ  
վեց տարի շարունակ զբաղած  
չըլլար անով ու ճանչցուցած ա.  
նոր սեպ սեւ ներքինը՝ հայ ժո-  
ղովուրդին արտառահամարի հայ  
մամուլին աշխիւ, անկեղծ, ան-  
կաշառ մասը: Բայց որովհետեւ  
մենք հակայեղափոխական հո-  
սանքի ստեղծուելուն մասին պի-  
տի խօսինք, անհրաժեշտօրէն  
պէտք է խօսինք նաև 96ի հն-  
չակեան պառակտումին մասին  
գոնէ երկու տողով, և որովհե-  
տեւ նոյն թուականի հնչ. յա-  
ռակուումը, ու հակայեղափոխա-  
կան հոսանքը ստեղծողը նոյն ին-  
քը Արփիար եղած է, ահամայ  
կանց պիտի սուսենք այս մար-  
դուն դէպի յեղափոխական բա-  
նակր կատարած արշաւանքներու  
վրայ, որոնք ուժգին հարուած  
տուած են Սեղ. բանակին, որը  
կը մոսցուի այն ատեն, երբ մոս-

ցուի նաև «Հէնկթիմուր» կա-  
տարած արշաւանքը Հայաստանի  
վրայ:

Հնչակեան կուսակցութիւնը իր  
ինը տարուան գոյութեան մէջ,  
մէկ անգամ միայն ընդհանուր  
ժողով մը ունեցաւ Լոնտոն քա-  
ղաքը. քննելու համար ինը տա-  
րուան կամ աւելի ճիշդը 5.6  
տարուան — որովհետեւ Հնչակեան  
գործունէութիւնը, մասնաճիւ-  
ղերուն յաստատուելը 90էն կը  
սկսի — կեդրոնի գործունէութիւ-  
նը, և զրամական հաշիւները.  
Հնչ. կուսակցութեան ծրագրին  
մէջ չկար որ ինը տարի, կամ  
հինգ տարի յետոյ կեդրոնը հա-  
չիւ պիտի ներկայացնէ իր մաս-  
նաճիւղերուն: Հայաստանի զորքեց  
մասնաճիւղերը, ընդհանուր ժո-  
ղով գումարելու համար. — բարի  
ծայրիկ Արփիարը. — ինչո՞ւ. — ո-  
րովհետեւ վաճառուած էր ան կեդ-  
րոնէն. պաշտօնական թուղթով  
որուն տակ ստորագրած էին կեդ-  
րոնի անդամները, և հոն գտնուող  
մէկ երկու հնչ. գործիչներ:

Արփիար արտաքուստ օրէն իսկ  
կը տեղացնէ նամակատարով մը  
բոլոր իր բարեկամ գործիչներուն,  
բոլոր իր ծանօթ մասնաճիւղե-  
րուն, որոնցմով «դառնազգեստ  
զայլ» կը յայտնէր որ իրենք  
պառնջօրէն այսքան տարի կեդ-  
րոն ըսուած տ. և տիկին Նազար  
պէկի վրայ կուրօրէն վտարու-  
են, մինչդեռ անոնք ու է գործ  
չեն կատարած և նոյն իսկ ի-  
րենց անհրաժեշտ պարտականու-  
թեանցը մէջ թերացած:

Ու հայ յանկարծ կը յեղաշրջ-  
ուի գործիչներու ու մասնաճիւ-  
ղերու սմբողջ էութիւնը որոնք  
Արփիարի աւելի կը հատարին  
մօտէն ճանչնալով զայն, իսկ ա-  
նոր օճը ծակէն հանող գրիչը հե-  
րիք էր որ պատգամաւորները  
ատելութեամբ լեցնէր կեդրոնի  
հանդէպ:

Արփիար մասամբ հասաւ նպա-  
տակին. մասամբ ըսի, որովհետեւ  
իր նպատակն էր զինքը արտաք-  
սողները «չըմտըջլախ» դուրս  
ձգելով կուսակցութեան ինք ըլ-  
լալ երկրորդ նազարպէկի մը, և  
սակայն իր տան մէջ ըրած հա-  
շիւները շուկայի հաշիւներուն  
յարմար չեկան, «Հնչակ» և  
կեդրոնի դրամները ու բոլոր գոյ-  
քերը մնացին դարձեալ Նազար  
պէկի արամագրութեան տակ:  
Իրաւունք չունենալով նաև հրա-  
տարակել «Հնչակ»ը. հատ մը  
միայն կարենալով հրապարակ  
նեան, որը ընդունուեցաւ յե-  
տոյ կեղծ «Հնչակ»:

Այսպէս հայ Արփիար պառակ-  
տեց հնչ. կուսակցութիւնը, վե-  
րածելով երկու հաճուածի. իր  
հաշուով վրէժ լուծած ըլլալով  
Նազարպէկեան կեդրոնէն, հոգ  
չէ ի՛նչ այդպէսով կուսակցութիւն

մը քանդեց. և ի մնար հիմակ ի-  
րեն վրէժ լուծել գաշնակցու-  
թիւնէն, սրուն Պոլսոյ կեդ. կո-  
միտէն տէնօրի ենթարկած էր  
զինքը:

Վերակազմեալ կեդրոնին մէջ  
շուտով դարձեալ անհամաձայնու-  
թիւն տիրելով հեռացան անկէ  
մէկ երկու անկեղծները, որոնց  
տեղը գրաւեցին Արփիարի հա-  
րազատ ընկերները:

Այլ եւս ընթերցողին յայտնի  
է թէ վրակազմեալ կեդրոնը իր  
երկու հրատարակութիւններով  
«Մարտ» ու «Նոր-կեանք» ու  
լինչ յաւուր դեր կատարած են  
իրենց վեց պարուն գոյութեան-  
նը մէջ. 1) Յեղափոխութիւնը  
փաստաւոր ցուցուցած. որովհե-  
տեւ յեղափոխական գործունէու-  
թեան մէջ մահ, շարք, կախա-  
ղան, աքսոր կար, մինչդեռ վեր-  
կեդրոնը իր գործին վրայէն  
ուր գրուած էր երբեմն «Մահ  
կամ Վրատութիւն» այս նշանա-  
բանը բարեփոխած. այսինքն  
«մահ» շնչած «ազատութիւն»  
միայն ստացելով. նշանաբանը  
նշով «խելք» որով կորելի է  
եղեք ազատութիւն ձեռք չերել  
առանց մեռնելու:

2) Կաշնակցականները (Բեւեռոյ  
գործիք են կազմակերպ. 3) Սե-  
րաքներու հեղափոխութիւնները ազ-  
գային դատը հիմնադրուած ընդ

ընթացք ցուցուցած. 4) երկիւ  
զէնք փոխադրելը այդտեւերու  
նոր գուռ բացող անխոհմտութիւն  
ցուցուցած, 5) պաշտելի դէմ-  
քեր, որոնք երկրին ծոցէն ծնած  
իրենց եղբայրներու, հայրերու,  
քոյրերու քաշած տառապանք-  
ներուն տառապակից եղած, ու  
չհանդուրժելով այլ եւս ըմբոստ-  
ներ գարձած ու ատով պատու-  
հաս եղած կառավարութեան, օ-  
րինակ եղած հայերի տասարդու-  
թեան, անամօթաբար, անխղճու-  
րէն վարձկաններ ցուցուցած:

Ընթերցող, շարունակե՛ք  
այլ եւս մեր փաստերը. միթէ՞  
զրպարտութիւն է Վերակազմ-  
եալ Հնչ. կեդրոնի մասին վերը  
յիշուածները. — Թերթեցէք  
«Մարտ» և «Նոր-կեանք» պաշ-  
տօնական թերթերը պիտի հա-  
մոզուիք որ զրպարտութեան մը  
առջեւ չէք գտնուիր: Աւելի վա-  
րը արդէն, տ. Չիթճեան հնչ.  
լիազօր ներկայացուցիչը ևս կար-  
գարացնէ մեզ մեր ըրած ամ-  
բաստանութեանցը համար: Աւ-  
րեմն համոզու՞մով պիտի կրնանք  
պնդել թէ, Վեր. Հնչ. կեդրոնը  
իր վեց տարուան ընթացքին  
մէջ գործած է միայն յեղափո-  
խութեան հարուած ապու հա-  
մար:

Ո՞րն է արդի գործնական յե-  
ղափոխական կուսակցութիւնը—

առանց վարանելու, կրնանք ը-  
սել որ Կաշնակցութիւնը—հա՛-  
ուրեմն հարուածը ճիշտ տեղին  
կը զարնուի. թող տապալուի  
Կաշնակցութիւնը. Թող տապալու-  
ուի «Թիֆլիզի երեակը» ուրկէ  
եկած է եղեր (\*\*) Արփիարի «սե-  
ւսցրէք» հրամտը: Ահա աս  
եղած է իրենց առաջին գործը,  
եւ սակայն միթէ միայն Արփիա-  
րը պիտի ճանչնանք իբրեւ պա-  
տասխանատու այս բոլոր շարի-  
քին. — ո՛չ երբէք: Արփիար մի-  
նակը պատասխանատու է միայն  
հնչ. կեդրոնը պատակտելու գոր-  
ծին մէջ, իսկ այնուհետեւ նոյն-  
քան պատասխանատու են, Գե-  
ղամ, Արզուեան, Սուրէն, Աղա-  
սի, Հասո, Լեւոն Մկրտիչեան,  
Ծահրիման, Չիթճեան Փափազ-  
եան—բայց չըլլալ որ Ֆիլիպէի  
Փափազեան, գուք ձեզ շփոթէք  
Ամերիկայի Փափազեանին հետ—  
և ուրիշ խելքերին զուխնին  
միևնոյն ժամանակ ձեռնհաս հն-  
չակեաններ:

Ո՞րն է արդարանալու փաստ  
չունին վերոյիշեալները: որոնք  
բոլորն ալ շահախնդիր, աթո-  
ւամով Արփիարներ եղած են  
մնալով գիտակցաբար վեց տարի  
հաւատարիմ գործակից յիշեա-  
լին, իսկ այսօր որ Արփիար կը  
պակսի իրենց մէջ, դարձեալ ա-

նոր ոգին է որ կը տիրէ, անոր  
սխտէմն է որ կը շարունակուի  
ցարգ. Պիտի փաստենք աւելի  
վարը:

Ֆիլիպէ ՍՈՒՐԵՆ

### ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

ՖԻԼԻՊԷԻ ՀԱՅ ԵՎԵՂԵՅԻՆ ՍՉԿ

Միամիտ ու բարեպաշտ ըն-  
թերցողը չարմանքով պիտի  
հարցնէ ինքնիրեն. միթէ ըլլա-  
լի՞ք բան է ասիկա. Միթէ շա-  
հագործում կրնայ ըլլալ մերկ ու  
բազիկ Բրիտանոսի աստուածային  
տանը մէջ. Միթէ ըլլալի՞ք բան  
է ասիկա հոն, ուր 1903 տարի-  
ներէ ի վեր կը քարուղւտի հա-  
մետ խօսքը խոնարհ Բրիտանո-  
սի, որ ամէն տեղ կըսէր. «Սի-  
րեցէք զիրար. ներեցէք ձեր  
թշնամիրներուն. մի՛ հատուցա-  
նէք ակն ընդ ական և ատամն  
ընդ ատաման. վրիժառու մի ըլ-  
լաք, գլխաւորտ եղէք. արծա-  
թաօր մի ըլլաք, խաղաղասէր  
ու խոնարհ եղէք: Եթէ երկու  
շապիկ ունիք, մէկ հատը չունե-  
ցողին տուէք: Եթէ մէկ երես-  
նիդ ապսակ մը զարնեն, դար-  
ցուցէք միւսն ալ...»

### ԽԱՆԱՐԻ ԽՈՐԲՈՒՄ

Գործերս վերջացրած ես պատաստ  
վում էի հեռանալ Վիեննայից, երբ  
անակնկալ կերպով հանդիպեցի մի  
Ֆրանսիացի վաղամանօթ բարեկամի,  
որը—որպէս յետոյ տեղեկացայ—վեր-  
ջի ասրիներու մի ընտանիքով մի-  
ասին փոխադրուել էր պատմական այդ  
գեյքիցի քաղաքը եւ վարում էր կէս  
բանաստեղծական կեանք. նա իր  
ժամանակի մեծ մտքը անց էր կաց-  
նում ծովային զբօսանքներով եւ որ-  
սորդութեամբ: Նրա աստիճանի հա-  
մաձայն, որչեցիք հետեւեալ օրը  
գնալ մասին որսորդութեան:

Առատեան շատ վաղ. երբ դեռ  
արշալոյսի վարդագոյն ճառագայթ-  
ները կօխ էին մղում աղաւթի խա-  
ւարի հետ եւ սպանում պատուելի ջը-  
բա մտայն սիրտը, մեք ուզեալովե-  
ցինք քաղաքից դուրս՝ դէպի հիւսիս  
—արեւմուտք: Արեւելքը ճանր-ճանր  
կարմրում, արեւն գոյն էր ստա-  
նում: Մենք քայլում էինք մի ոչ  
այնչափ կանոնաւոր ճանապարհով եւ  
անցնում մերթ գտնազան ապարանք-  
ների, պարկազների փառակների,  
մերթ սքանչելի մարմարների, ար-  
ձանների մօտով, ուր փայլում էին  
խաղաղի արուեստագետի հրաշակերտ  
մատները հմայիչ հետքերը, մերթ  
փոսերի, գերեզմանների միջով, ուր  
ամէն քարի կտոր կարծես ստիգում  
էր մեզ մերթ թափով ակամայ վե-  
րադառնալ հին, հին գործերի պատա-  
մական զարնուրելի անցքերին. ա-

մէն կօթով կարծես ասել էր ուզում.  
«Ե՛ն անցորդ. ինչքան մարդկային  
առապանքներ, մահաստեր ար-  
շաւանքներ եւ արեւնայի ճակատա-  
մարտերի հանդիսատեսներ ենք մենք.  
Ինչքան մարդկային տնտես արիւն են  
կայ տեւել այս սեւ հողերը...» Եւ  
կարծես տեսնում էի այդ աւերակ-  
ների մէջ հալածական թափառելի  
վերածնութեան մեծ կարակետ Դան-  
տէին, կեճապատ դէմքով, սուզված  
խոր երեւակայութեամբ չիթիսի ա-  
հաւոր անդուրդներէ եւ մշտադար  
դրախտի ջրաղբահոտ բուրուների  
մէջ. իր ջրնայ սիրունուն՝ Ինչա-  
րիչ ձեռքը ինչքան ա՛ագին փոփոխ-  
մունք էր մտքիւ այդ երբեմնի փա-  
ռաւոր վայրերում:

Կէս ժամից յետոյ փլատակները,  
արձանները սկսեցին նօսրանալ,  
Դեռ խիտ էին դամբանաքարերը,  
բայց մի քիչ յետոյ դրանք էլ  
նօսրացին: Մենք քայլում էինք  
լայնատաշար, տափահակ դաշտի  
կրճով, ուր գաշապին վայրի ծա-  
ղիկները՝ կորցրած իրանց բոյրը եւ  
թարմութիւնը՝ սաստկացնում էին  
դաշտի անհրապոյր, ճնշող մի-  
ոնակութիւնը:

—Բա ո՞րն է մեր որձի շունը,  
հարցրի Ֆրանսիացի բարեկամին:

—Այնտեղ, անտառապահի մօտ  
եմ պահ տել պատասխանեց նա.  
մատով ցոյց տալով հեռուն:

Մի ժամվայ ճանապարհորդութիւ-  
նից յետոյ հասանք մի բլրի ստո-  
րուտը:

—Ահա, ասաց բարեկամս, այս  
բլրի միւս կողմն է գտնվում այն հա-  
շակաւոր անտառը, որին կոչում են  
«Սիլվա Դրակոնիս» (սասանայի ան-

տառ): Այնտեղ լաւ որս է լինում:

Բոլորովին լուսացել էր: Մենք  
բարձրացանք բլրի գագաթը: Արե-  
ղակի առատեան ճառագայթները  
ընկել էին շեղակի անտառի վրայ եւ  
ճառագայթի կատարների գեղնած տե-  
րեւները ցողոցում էին սուկեցոյն  
ճաճանչներով: Դաշակահար բոյսերի  
վրայ նստուտել էին վաղորդեան ցօղի  
մարդարանման կաթիլները: այդ-  
պէս գրաւիչ նազանքով փայլում են  
միայն անմխիթար որբի ամբոյն այ-  
տերից վար զլրվող արտասուքի  
կաթիլները: Մեր ասոք տարածել  
էր իր հակա մարմինը եւ նիրհում  
էր խորհրդաւոր «Սասանայի ան-  
տառ»ը...

Անտառի խորքում էր ան-  
տառապահի հիւղակը: Ծերունուն  
գտանք լուս նստած մի տախտի վը-  
րայ, հիւղակի դրան առաջ, նա մի  
բարձրահասակ, նիհար, ալեգարդ ի-  
մասնակի էր, որի ճակատին մտած-  
մունքի եւ խորին արտմտութեան կն-  
ճիւններ էին նկատվում: Բարեւելուց  
յետոյ առիւնք նրանից շունը եւ  
անյայտացանք անտառի մէջ: Սա-  
կայն պէտք է ասած որ որսներս շատ  
էր անյաջող. երկար թափառեցինք  
եւ ոչ մի կենդանի արարածի չը  
հանդիպեցինք. կհանք ջր կար ան-  
տառում, բարեկամս զարցուց մերթ  
ընդ մերթ բերնից թոցնում էր մի  
անկէքախաւն անմեղ հայհոյանք,  
որը չը գիտեմ ումից էր ժառանգել:  
Ուղիղ միջօրէին շունը վերադարձաւ  
մեզ մօտ պոչը կախած, զգոյշ եւ ա-  
մօթխած, Չկայ, գոչեց բարեկամս  
վշտոտ եւ մենք վերադարձանք ան-  
տառապահի խրճիթը ճաշելու:

Ծերունուն նորից գտանք նոյն  
տախտի վրայ նստած, էլի տխուր,

էլի մտածկոտ: Պայուսակները բաց  
անելով սկսեցինք ճաշել:

—Ին անտառը ասաց ընկերս ան-  
տառապահին, փչացել է, կեանքի  
նշով աւգամ չէ միացել. սատանան  
տանէ. ոչ մի որսի չը հանդիպեցինք,  
աւերակի հոտ է փչում այս տեղից:

Ծերունին անվրդով շարձեց գլու-  
խը եւ միշտ դիտում էր անթարթ  
աչքերով առաջը, վայրկեանական լը-  
ռու թիւնից յետոյ, ալ ձեռքով շոյց  
ձիւնագոյն միտքը, մի անմեղ հայ-  
եացք նետեց ընկերոջս եւ ասաց.

—Ես էլ պէտք է հեռանամ այստե-  
ղից, որդի. կեանքը, եռանդը եւ  
չէնութիւնը կորան այս անտառից:  
Չարհուրելի է իմ կեանքը այստեղ,  
մանաւանդ գիշերները: Մեռելու-  
թեան, խաւարի մի սարսփելի քօղ  
ընկաւ այս շին անտառի վրայ: Մի  
ամիս է ինչ ինձնից զատ ազամարդու-  
ոտը չէ կոխել այս տեղ, կենդանի-  
ներն էլ կորան: Ամէն ինչ սեւ է  
եւ մաւր... Ձեզ գուցէ անիրականա-  
լի թաւի, բայց ես երգվում եմ ահա  
իմ միակ որդւոյս կեանքով եւ հի-  
րոջ անունով, որ այս անտառը դե-  
ւերի, մոթ, անապատան ոգիներ  
ների օթեւան դարձաւ: Ամէն գիշեր  
երբ տիրում է խաւարը, երկինք այն  
ասող եւ մայլ, այստեղ, մօտակայ  
բլրի գագաթնէ, գալիս մի խորհր-  
դաւոր, մարդակերպ սուեր, ժամե-  
րով ինչ որ անեկներ խօսքեր է ար-  
տասանում, ոգիներին հետ է խօսում,  
բայձրաձայն կանչում, լալիս, հեկե-  
կում, հառաչում եւ կորչում խաւա-  
րի խորքում...

Էմիլ Շդարշահաց  
(Շարունակելի)

—Այո, պիտի ըսենք մենք ամբողջ պատասխանատուութիւնը մեր վրայ առնելով: Այո, ոչ միայն շահագործում, այլ էն տրամադրի ու էն անաստուած շահագործում: Կուզէ՞ք ստուգել—հըրամնցէք:

Նախապէս իմացնենք թէ ներկայ թղթակցութեան նպատակը՝ մեր երանելի հաւատացեալներուն հաւատքը պահարակելու խախտել չէ: Ասիկա ոչ կուզենք ոչ ալ կրնանք, որովհետեւ հաւատքը զգացում մըն է, կամ աւելի ճիշդը, հոգեբանութիւն մը, որ կրնայ տրուած անտեսական կազմուածքի վրայ բռնուիլ: Այսինքն մարդոց զգացմունքները չենք կրնար բռնաբարել, մէկ կողմէն զանոնք միջավայրի օրինաւոր ծնունդը համարելով, իսկ միւս կողմէն հասցուած ըլլալով թէ ինքը կեանքը, հասարակական յառաջդիմութիւնը, իր աւելով պիտի մաքրէ մարդոց գիտելիքը բոլոր անպաշտութիւններէն ու նախապաշարութիւններէ: Կը բաւէ գիտնալ ընկերաբանական այն տարրական ճշմարտութիւնը, թէ որքան որ մարդ բնութեան ուժերն ու զօրութիւնները կը նընուածէ իր իշխանութեան տակ, այնքան աւելի կը ծանօթանայ անոր գոյանիքներուն ու զանոնք ստեղծող օրէնքներու հետ, հետեւաբար այն գերբնական ուժերու հետ: անհասկանալի ու առեղծուածական նախնական վայրենի մարդուն, մինչեւ անգամ քաղաքակիրթ վայրենիքին՝ եւրոպացիին,—որոնք Աստուած անունը կրող խորհրդաւոր անձնաւորութեան տակձած կուած են: Այս բնական օրէնքներու այս ճանաչման հետեւանքն է մարդուն յաղթութիւնը, իսկ բնութեան պարտութիւնը: Այս ամէնը՝ արդիւնագործական միջոցներու զարգացման բարձր աստիճանի վրայ կարելի է: Ընդհակառակը, արդիւնագործական միջոցներու զարգացման ցած աստիճանին վրայ մարդ գերի է բնութեան: Այն ատեն մարդուն մէջ կը կազմուի հոգեբանութիւն մը, որ հաւատք կը կոչուի: Անտարակոյս տնտեսական յեղաշրջման հետ քովէ քով կը քալէ հաւատքի յեղաշրջումն ալ:

Իրաւ որ աներեւակայելի է հասարակութեան մը մէջ, ուր ամէն բան, անհրաժեշտութեան ուժին հպատակելով, ապրանքի վերածուած է, եկեղեցին բացառութիւն մը կազմէ այս օրէնքէն: Չէ՞ որ արդի հասարակութեան էն յայտարար նշանը՝ առեւտուրն է: Չէ՞ որ առեւտրու մարդ չը կրնար ծախել: Իսկ եթէ ապրիլ ու զէ, պէտք է անպատճառ՝ դրամատիրական այս աշխարհին մէջ պտտեցական խո-

չոր կամ մանր՝ միութիւններ ներկայացնել: Թէպէտեւ գնելու ու ծախելու ձեւերը կը փոխուին շարունակ, ինչ ինչ բոլորակութիւններ կտանան, բայց միշտ էութիւնը կը մնայ:

Այսպէս է ուրեմն նաեւ եկեղեցին, հիմակուան եկեղեցին: Ազօթքը ընելու համար անշուշտ գրպանդ ուրիշ Աստուած մը կրելու ես, դրամի Աստուածը, որ ներս մտնալու իրաւունքն ունենաս: Անդու անալի կերպով անցան իրականութեան մէջ ընթերցող այն ժամանակները, երբ որ քրիստոնէութիւնը ու եկեղեցին՝ հարստահարեալներուն ու աղքատներու ձգտումներու, պահանջներու և վախճաններուն արտայայտութիւնն էր:

Քրիստոսի մեռնելէն ետքը, մեռաւ անոր վարդապետութիւնն ալ, ճշմարիտ վարդապետութիւնը: Հիմակուան եկեղեցին կը ներկայացնէ ու կարոտայտէ ունեւոր դասակարգերու շահերը: Իրաւացի է հանրածանօթ ընկերաբան Գարլ Մարքսի դիտողութիւնը, երբոր կըսէ թէ՛ «եկեղեցին ժողովրդներու համար ափսոն է»: Այն ատենէն ի վեր, երբոր նուաճու ձգտակարքը իր «մարգարէներով» ու «առաքեալներով» իր իշխանութիւնը դրաւ տիրակալող «փարիսեցիներու» ու «սատուկեցիներու» դասակարգին վրայ, եկեղեցին միջոց մը դարձած է ժողովուրդը կուրցընելու ու շահագործելու:

Իրիցէ չէ՞ք լսեր թնդանօթներու որոտումները տէրունական ժամերգութիւններու ատեն.....

Ասոնք պատահական գէտողութիւններ են որ ըրի եկեղեցիի մասին ընդհանուր կերպով ու մասնաւորապէս մեր եկեղեցիին մասին, երբոր իմացայ հետեւեալ իրողութիւնը:

Տեղւոյս Թաղական խորհրդի պարոն անդամները, որոնց մէջ՝ «ազգածանօթ» «էգնայեան» աղա, տեղւոյս ազգային վարժարանի տնօրէն էֆէնտի «Կրօն»ը բէք աթան կը շտայլէր «հասարակային գործիչի տիպար» յորջորջումը գիտութեան տաճարի խորանին վրայէն, ամենայն հաւանականութեամբ ամասկտնրապահովելու գիտումով (նոյն գիտումով ալ օգտափոխութեան գիմակի տակ այս տարի էգնայեան աղային ընդլիտէնցիտ—Գարլովա—գնաց) «Գէորդ աղա» թէ՛վէ՛քէլեան», «Գանձապետ կարապետ աղա»,—կը բռնաւորեն ժամին լուսաբարը՝ օրական 10 ժամ «41 օրուան գործով», եկեղեցիին գործերէն զատ, «սուանց կուտ մը վճարելու»:

Գուք կը տեսնաք այս միակ ի-

րողութենէ—այսպիսիներ քիչ չեն ու մենք պիտի չուշանանք զանոնք ցուցնելու հայ հասարակութեան—թէ ինչ տմարդի ու վայրենի շահագործում կը տիրէ անդոյս եկեղեցիին մէջ: Ասկէ զատ գիտէ՞ք որչափ կը վճարուի լուսարարին իբր եկեղեցական պաշտօնեայ: Ընդամենը 15 լէֆ ամիսը օրական 8 ժամէն աւելի աշխատանքի փոխարէն, այսինքն կէս լէֆ օրը: Էհ, խնդրեմ, ասոր վրայ ալ գացէք հաւատացէ՛ք անքրիստոնէայ այս հոգիներուն քրիստոնէութեանը: Այսպիսի իրողութիւններ, որոնք կը ցուցնեն հայ բանւորներու շահագործման աստիճանը, քրիստոնէական բարեպաշտութեան դիմակը վար կառնեն մեր աղաներուն երեսէն ու կը ցուցնեն ճշմարիտ դէմքը՝ էգնայեաններու կողմուտէն ելած մեր ազգասէրներուն», որոնք կրօններու «դաստարակային գործիչներն» առջեւ «հասարակային գործիչներն», այնպէս չէ՞:

Լաւ «հասարակային գործիչներն», այնպէս չէ՞: Լաւ «փարիսեցիներն» ու «սատուկեցիներն»:

Մենք պիտի վերջացնենք Քրիստոսի խօսքերովը. «Վա՛յ ձեզ, փարիսեցիներ ու սատուկեցիներ»:

Արմինուհի

ԴԱՏԸ

Երեկ Վարնայի հաշտարար դատարարին մօտ պիտի տեսնուէր Վառնայի Ոստիկանապետի Վարդօի դէմբացած դատը, որուն հիմը կը կազմէր «Րաւունք» խմբագիր Գուրգէն Օղլուի զրպարտագիրը: Այդ զրպարտագրի մասին մենք ժամանակին դրած ենք արդէն այս էջերուն մէջ:

Զրպարտագրի մէջ Գուրգէն Օղլուն յայտարարած է թէ Վարդօն դրդած է Մեսրոպ Վարժապետեանը և Աւետիս Գէորգեանը որ զինքը ձեռնեն, ու իր զրպարտութիւնը ապացուցելու համար սուտ վկայ նշանակել տուած է Տիգրան ձգնաւորեանը և Տիգրան Էլմասեանը, սաւանաթիւը, որոնց էբր թէ Վարդօն անձամբ յայտարարած ըլլայ թէ ինք ձեռնել տուած է զԳուրգէն Օղլուն: Վերկաներ որոնց հետ Վարդօն երբէք չը տեսնուի:

Գատարանի մէջ երբ ձգնաւորեան կիմանայ թէ զինքը սուտ վկայ կարգած են, իր պժգանքը ուղղելով Գուրգէն Օղլուի հասցէին, կառնէ կը քալէ, առանց դատին սպասելու: յայտարարելով «սուտ հիմնովին սուտ է և ամբողջ Վառնան գիտէ թէ Վարդօն եւ ես իրարու հետ չենք տեսնուիր»:

Գատարանի մէջ Գուրգէն Օղլուն, որ իբր վկայ միայն կանչուած էր, իր փաստարանը կը ներկայացնէ դատարարին այդ խառնակ զրպարտագրի մէջէն դուրս գալու շեք միջոցով: սակայն դատարար կը յայտարարէ «դուն վկայ ես և իրաւունք չունիս պաշտպան ունենալու, մեղադրողը ոստիկանապետն է և անոր ներկայացուցիչը հոս կը գտնուի»:

Գատարանի մէջ Գուրգէն Օղլուն Վարժապետեանի բացակայութեան պատճառով:

Հաւատացած ենք որ երկրորդ դատավարութեան միջոցին Գուրգէն Օղլուի ստախոս լինելը անպայման կերպով պիտի հաստատուի Վառնայի դատական և ոստիկանական պաշտօնէութեան առջեւ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մակեդոնական գործերը կարագող ընելու ծրագրին հաւանած է և Ետալիան ու միացած է Աստրիոյ և Ռուսիոյ: Գերմանիա չէզոք գործը մը բռնած է:

—Սուլթանը չի ուզիր որ Տարմատ փաշան միւրանայի մէջ թաղուի, որպէսզի անոր գերեզմանը մէջն թուրքերուն համար ուխտատեղի մը չը դառնայ:

ՊՈՒԿԱՐԻԱ

Փետրուար մէկին Սօֆիայի մէջ պիտի տեսնուի նախկին ապստական նախարար պր Ռոսուլովովի և իր ընկերներուն դատը:

—Երեսփոխանական ժողովի մէջ հարցապնդումի նիւթ եղած է «Վէչէրնա»-իօջթա՝ թերթին ներքին գործոց նախարար պ. Լիւդականովին վերաբերող հրատարակութիւններու մասին:

Յ Ր Ա Ն Ս Ա

Անցեալ օր Բարիլի մէջ մեռաւ «Թալիս»-ի նշանաւոր թղթակիցը Իլովիձ, որ առաջնակարգ թղթակից մըն էր, և շատ ճարպիկ էր պետական գույտնիքներ իմանալու և ամեն մուկ խնդիր պարզելու մէջ:

ՎէնէճՈՒԷԼԱ

—Վաշինկտօնի ծովային իշխանութիւններն չեն ծածկեր որ հրամաններ արձակած են որ պատերազմական նաւերը կաղմ ու պատրաստ գտնուին: Այդ կարգադրութիւնները կը լլան Գերմանիոյ դէմ, եթէ Գերմանիա շարունակէ իր ներկայ ընթացքը Վէնէցուէլայի վերաբերմամբ:

Отговорникъ  
Мурадъ Ераносянъ  
Печатница „Взаимность“ Варна